ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«27» հոկտեմբերի 2023թ.

ՀՐԱՄԱՆ N 538-Հ

«ԱԶԻՄՈՒՏ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N 329-Ա հրամանը և հիմք ընդունելով «Ազիմուտ» ավիաընկերություն» բաժնետիրական ընկերության 2023 թվականի սեպտեմբերի 29-ի և հոկտեմբերի 26-ի հայտերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Ազիմուտ» ավիաընկերություն» բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Ուֆա/UWUU/-Երևան/UDYZ/-Ուֆա/UWUU/ երթուղով՝ 2023 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2024 թվականի մարտի 30-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, Մինեռալնիե Վոդի/URMM/-Երևան/UDYZ/-Մինեռալնիե Վոդի/URMM/ երթուղով՝ 2023 թվականի նոյեմբերի 7-ից մինչև 2023 թվականի նոյեմբերի 14-ը՝ 2 (երկու)

չվերթ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Ուֆա/UWUU/-Երևան/UDYZ/-Ուֆա/UWUU/ չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N 329-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Երևան/UDYZ/-Ուֆա/UWUU/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2023 թվականի ձմեռային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2023 թվականի նոյեմբերի 4-ից մինչև 2024 թվականի մարտի 30-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմանների, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N 329-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը՝ մինչև 2024 թվականի հունվարի 7-ը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվությունների հանձնումն Ընկերությանը:

10/27/2023

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 156/2023
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 156/2023
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Ազիմուտ» ավիաընկերություն» ԲԸ «Azimuth Airlines» JSC
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	RRJ-95
Հաճախականությունը Frequency	շաբաթական 1 չվերթ 1 flight per week
Երթուղին Air route	Ուֆա/UWUU/-Երևան/UDYZ/-Ուֆա/UWUU/ Ufa/UWUU/-Yerevan/UDYZ/-Ufa/UWUU/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	04/11/2023 մինչև 30/03/2024 04/11/2023 till 30/03/2024

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

10/27/2023

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՀԱՄԱՐ
ELECTRONIC SIGNATURE IS VALID

27.10.2023
(տալու ամսաթիվը)
(date of issue)